

Կարեն Պ. Հայրապետյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՀԱՏՎԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱ- ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 ԹԹ.)

Մաս առաջին: Հատվածականության հաղթահարման քաղաքական հիմնանպատակի առաջադրումը և նրա իրագործմանն ուղղված առաջին քայլերը

Մուտք

Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.) մեծաթիվ գաղթականության առկայությունը պետության կողմից հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիր էր, որը բացի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ընդհանուր բնույթի դժվարություններից, առաջ էր բերել նաև հատվածականության երևույթը¹:

Գաղթականության խնդրի այս առանձնահատկությունն իր բազմաթիվ դրսևորումներով լայն տարածում էր գտել ներքաղաքական կյանքում և իր կնիքն էր դրել արևելահայ ազգաբնակչության ու արևմտահայ փախստականների միջև գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

Ինչպես ողջ հայ ժողովուրդը պատմական ճակատագրի բերումով բաժանված էր երկու հատվածների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության նեղ սահմաններում պատսպարված հայ գաղթականությունը տարանջատված էր արևելահայ և արևմտահայ մասերի: Այսպես՝ 1918 թվականի հոկտեմբերին ՀՀ տարածքում հաշվառված ընդհանուր՝ 330 հազար փախստականներից արևելահայերը կազմում էին 180 հազար,

¹Հոդվածն ընդունվել է տպագրության 23.04.2013:

1 Տե՛ս **Կ. Հայրապետյան**, Փախստականների հիմնախնդիրը Հայաստանի նորաստեղծ առաջին հանրապետությունում, «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, գիրք 2 (19), Եր., «Ասողիկ», 2004, էջ 134-136:

իսկ արևմտահայերը՝ 150 հազար մարդ²:

Հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ երկու հատվածներն իրենց հերթին ազգագրական–տարածքային առումով բաժանված էին ավելի մանր խմբավորումների: «Այս բոլոր Երեսնցիները, Վանեցիները, Սասունցիները, Ղարաբաղցիները, Շատալացիները, Նուխեցիները, Արեշցիները են. են. մի այնպիսի սումբուր էին առաջացնում մեր պետական–հասարակական գործերում, որ դժվար է նոյնիսկ պատկերացնել»³, – գրում է Ա. Ջամալյանը: Ուստի գաղթականության հարցում քաղաքականություն մշակելու և իրագործելու ժամանակ հանրապետության իշխանությունները չէին կարող հաշվի չառնել վերջինիս հետ կապված պրոբլեմների բոլոր դրսևորումները, այդ թվում՝ հատվածականության հիմնախնդիրը:

Մեծ Եղեռնը վերապրած հայ ժողովրդի արևմտահայ հատվածի մի մասը կազմող Հայաստանի առաջին Հանրապետության սահմաններում պատասպարված արևմտահայ փախստականները յուրահատուկ էթնոսոցիալական ընդհանրություն էին՝ իրենց ուրույն հատվածական ինքնագիտակցությամբ, բարքերով և ավանդույթներով: Ռազմաքաղաքական առումով նրանք բավականաչափ կազմակերպված էին: 1917 թ. Անդրկովկասում արևմտահայ փախստականները հրավիրել էին Արևմտահայերի 1-ին համագումարը, ձևավորել էին առանձին արևմտահայ ազգային–քաղաքական մարմիններ և ունեին ռազմաքաղաքական առաջնորդներ: Գործում էին նրանց շահերն արտահայտող հայրենակցական միություններ, առանձին կուսակցություններ կամ կուսակցություններից առանձնացված, ինքնուրույն ստորաբաժանումներ: Թիֆլիսում հրապարակվում էին արևմտահայ պարբերականներ՝ արևմտահայ դաշնակցականների «Աշխատանքը», ռամկավարների «Վան–Տոսպը», Անդրանիկի և մի շարք արևմտահայ մտավորականների կողմից նախաձեռնած անկուսակցական «Հայաստանը»:

Միաժամանակ արևմտահայ փախստականներն ունեին իրենց ընդգծված քաղաքական նպատակներն ու իդեալները՝ վերադառնալ հայրենիք և ազատ ու անկախ Հայաստանում ինքնուրույն տնօրինել իրենց ձակատագիրը: Ռուսաստանում ցարիզմի տապալումից հետո արևմտահայ փախստականները, դրսևորելով աննկուն կամք, կենսունակություն և տոկունություն, վերաբնակեցրել էին ամայացած Արևմտյան Հայաստանը և լծվել հայրենիքի վերաշինության գործին: Արևմտյան Հայաստանում ստեղծել էին տեղական կառավարման մարմիններ, ժողովրդի ապահովության համար կազմավորել էին կամավորական զինված խմբեր, ինչպես նաև միլիցիայի գորաջոկատներ:

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ Կովկասյան ճակատի քայքայման պայմաններում, արևմտահայերը կազմավորել էին կանոնավոր զորամիավորումներ: 1918 թ. թուրքական զորքերի Արևմտյան և ապա Արևելյան Հայաստան ներխուժման ժամանակ նրանք զենքի ուժով լուծել էին իրենց գոյապահպանման խնդիրը: Արևմտահայ զորա–

2 Տե՛ս «Կառավարության լրաբեր», Եր., 15 հոկտեմբերի 1918 թ.:

3 **Արշակ Ջամալյան**, Յ. Քաջազունին և Հ.Յ. Դաշնակցութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924, N 8, էջ 70:

ջոկատները մասնակցել էին 1918 թ. Մայիսյան հերոսամարտերին՝ դրանով իրենց ներդրումն ունենալով Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման գործում:

1. Հատվածականության դրսևորումները և փոխադարձ անվստահության պատճառները

Նման բարդ իրադարձությունների բովոյ անցած արևմտահայ փախստականները, վերջիվերջո, իրենց կամքից անկախ, հայտնվել էին նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետությունում, որի նկատմամբ նրանք դրսևորում էին ավելի քան զուսպ և սառը, եթե չասենք՝ անտարբեր, իսկ որոշ դեպքերում նաև՝ թշամական վերաբերմունք: Ինչպես նշում էին ժամանակակիցները, այդ վերաբերմունքը շաղախված էր մի տեսակ խորթության, օտարության զգացումով:

Օրինակ՝ Մ. Տեր-Մինասյանը (Ռուբեն) վկայաբերում է «թրքահայ Ազգային Խորհուրդի եւ Հայրենակցական միութեանց այն գաղափարը՝ որ ներկայ Հայաստանը իրենց խորթ միայն «Արարատեան Հանրապետութիւն» մըն է»⁴:

Ս. Վրացյանը նույնպես նշում է, որ արևմտահայ փախստականները, առհասարակ, հարազատ չէին զգում իրենց հանրապետության մեջ⁵: Անդրանիկի գլխավորությամբ արևմտահայ փախստականների մի մասն ընդհանրապես չճանաչեց իրենց խոսքերով՝ «Թուրքիայի շտրիիվ» ստեղծված «Երեւանի հայկական հանրապետութիւնը», թշամական վերաբերմունք դրսևորելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների նկատմամբ⁶:

Արևմտահայերի կողմից Հայաստանի Հանրապետությունը դիտվում էր սոսկ որպես «Արարատյան» կամ «Երևանյան» հանրապետություն: ««Հայաստանի Հանրապետություն» խոսքն էլ,– վկայում է Ս. Վրացյանը,– ընդունելի չէր շատերի համար՝ եղածը սոսկ «Արարատյան Հանրապետություն էր»⁷: «Թրքահայոց համար,– գրում է Ա. Չելեպյանը,– Երեւանի Նահանգը, որ 1828–էն ի վեր Ռօմանֆներու կայսրութեան մաս կը կազմէր, Հայաստան նոյնիսկ չէր. այդ իսկ պատճառով զայն կը կոչէին «Երեւանեան» կամ «Արարատեան» հանրապետութիւն: Բուն Հայաստանը արեւմուտքի մէջ էր, Տարօնի եւ Վասպուրականի կողմերը»⁸: Ի դեպ, նման մոտեցումը ժամանակին բնորոշ է եղել նաև արևելահայերին: «Մենք ռուսահայերս,– գրում է հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը,– սովորաբար Հայաստան անվանել ենք Տաճկահայաստանին: Նույնիսկ Արարատյան կամ Շիրակի դաշտից Տաճկահայաստան գնացողն էլ ասում է՝ Հայաստան

4 Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Եր., «Ադանա», 1990, էջ 151:

5 Տեն Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 269:

6 Տեն «Աշխատանք», Եր., 22 հունվարի 1919 թ.:

7 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

8 Ա. Չելեպյան, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Եր., «Արևիկ», 1990, էջ 501:

եմ գնում: Էլ չեմ քննում, թե ինչ է սրա պատճառը, բայց էսպես է»⁹:

Գրելով հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների փոխհարաբերությունների մասին՝ Ռուբենը մատնանշում է, «թե ինչ հակոտնեայ տրամադրություններ կային տաճկահայերի և ռուսահայերի միջև: Եթէ չասենք թշնամական, պիտի ասել անվստահություն կար հայ ժողովուրդի այդ երկու հատուածների միջև»¹⁰: Նման վերաբերմունքի մասին է նշում նաև Անդրանիկը, գրելով, որ պատերազմի ողջ ընթացքում ոչ մի ճնշումների չենթարկված Սյունիքի տեղական ազգաբնակչությունը սարսափահար և սովահար արևմտահայ փախստականների նկատմամբ դրսևորում էր սառը, անտարբեր, իսկ ժամանակ առ ժամանակ նույնիսկ թշնամական վերաբերմունք¹¹:

Նշված վերաբերմունքն առաջին հերթին դրսևորվում էր կենցաղում: Արևելահայերի հիմնական մասի համար տեղահանված ու թափառական արևմտահայ փախստականը միայն «գաղթական» էր, որը «այդ վիրատրական կոչումին կենթարկուէր յաճախ, իր արեւելահայ դրացիէն կամ տանտիրուհիէն»¹²: «Պիտի նկատել, որ ռուսահայ մասսան տաճկահայերին կը համարէր եկուոր, գաղթական,- գրում է Ռուբենը,- Նա կը կարծէր թէ այդ մասսան՝ մոտ 200, 000՝ միայն հիւր է իրենց երկրում: Մի քանի վայրերում տաճկահայութիւնը բեռ կը համարուէր իրենց համար: Այդ հոգեբանութիւնը աննշմար չէր մնում տաճկահայերից, որոնց ինքնասիրութիւնը կը վիրաւորուէր»¹³:

Երկու հատվածների միջև անվստահություն գոյություն ուներ ոչ միայն կենցաղում, այլ նաև հասարակական-քաղաքական փոխհարաբերություններում: «Տաճկահայը, գլուխ ունենալով գլխաւորապէս Վանի եւ Պիթլիսի վիլայէթների ժողովուրդը, այն գիտակցութիւնն ունէր, որ ձեռք բերուած ազատութիւնն ու անկախութիւնը իւր արիւնի գնով եւ իւր աշխատանքով է վաստակուած,- գրում է Ռուբենը,- նա նախանձով կը դիտէր, որ Նոր-Բայազետի կամ Շիրակի ժողովուրդը, որի մեջ դեռ ազատութեան եւ անկախութեան գաղափարները չէին ամրապնդուած, ապահով եւ ազատ է ու կը գտնուի իւր հայրենի օջախում, իսկ ինքը թափառական եւ արհամարհուած գաղթական կը համարուի»¹⁴:

Եվ իրոք, արևելահայերի մի զգալի մասի համար անկախ Հայաստանի գոյությունը անհասկանալի էր, իսկ անկախությունն անբովանդակ մի խոսք էր: Գ. Չախուշյանը իրավամբ նշում է, որ հանրապետության գոյության առաջին ամիսներին Հայաստանում ոչ ոք չէր հավատում, թե անկախությունը մնայուն է, և վերջինիս գոյությունը ժամանակի հարց էր թվում¹⁵: Նույնիսկ Հայաստանի Խորհրդում հնչում էին անկախությանը դեմ ելույթներ և պահանջում «վերականգնել միութիւնը Ռուսաստանի

9 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951, էջ 396:

10 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 149:

11 Տէն ԲՀԱ, հ. 1-2, Եր., 1991, էջ. 314-315,

12 Տէն Ա. Չելեպեան, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, էջ 377:

13 Տէն Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ. 149-150:

14 Տէն նույն տեղում, էջ 150:

15 ՀԱԱ, ֆ. Բ-4033, ց. 6, գ. 293, թ. 26:

հետ»¹⁶: «Ռուսահայ գիւղացին եւ քաղքենի մանր բուրժուան, որոնք վերջին տարիների վերիվայրումներից շատ էին տուժել եւ տնտեսապէս ծանր վիճակի մէջ էին գտնուում՝ երազում էին Ռուսաստանի վերադարձի մասին, որ իր հետ պիտի բերէր աժան հաց, շաքար, կերպասեղէն եւ կեանքը նորից դարձնէր այնքան դիրալի, ինչպէս առաջ...»¹⁷, - գրում է Ա. Զամալյանը: Իսկ Ռուբենը վկայում է, որ «թէեւ 1918ից Երեւանեան Հանրապետութիւնը անկախ էր, թէեւ 1919ից Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարն էր առաջադրուած, բայց փաստօրէն ռուսահայ ժողովուրդի մի խոշոր մասի համար դրանք անհասկանալի եւ անբովանդակ խօսքեր էին միայն. նոյնիսկ պետական հիմնարկութեանց եւ շատ պատասխանատու անձանց համար, ձեռք բերուած անկախութիւնը կը համարուէր ժամանակաւոր մի երեւոյթ, Հայաստան երկիրը կը համարուէր ռուսական մի երկրամաս եւ հայ զօրքը նոյնիսկ ռուսական զօրքի մի մասը»¹⁸:

Արևմտահայերի կողմից անվատահոյություն էր դրսևորվում նաև Հայաստանի կառավարության եւ նրա կողմից իրականացվող ձեռնարկումների նկատմամբ: Ինչպէս նշում է Ռուբենը, «նոր կազմակերպուած կառավարութիւնը, որի պաշտօնէից և գործառնութեանց մէջ դեռ եւս իշխում էին ռուսական ոգին, օրէնքն ու լեզուն, չէր կարողանում լայն ասպարէզ տալ թրքահայ տարրին պետական վարչաձեւին մէջ, մի երեւոյթ, որ առաւել եւս օգտագործուում էր հատուածական ձգտումներով տարուած անհատների կողմից»¹⁹:

«Հայաստանի Հանրապետության գոյության սկզբի շրջանում, արևմտահայությունը իրեն մեկուսացած էր պահում պետական կյանքից»²⁰, - վկայում է Ս. Վրացյանը: Այդ վերաբերմունքը դրսևորվում էր նրանում, որ արևմտահայ փախստականները ձեռնպահ էին մնում պետական աշխատանքներից: Պետական հիմնարկներում համեմատաբար քիչ արևմտահայ պաշտոնյաներ կային: Արևմտահայ երիտասարդությունը պարտադիր գորակոչից խուսափում էր, իսկ «երբեմն ալ հակառակ էր կառավարութեանը»²¹: Նման վերաբերմունքի վառ օրինակ էր սասունցիների կեցվածքը. «Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար,- գրում է Ա. Զամալյանը,- չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպէս որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, և կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչեւ որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրապետի հանգամանք առած «Ռուբէն փաշայի»²² անունով»²³:

Այդ ամենը հանգեցնում էր նրան, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատված-

16 ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 7, թ. 80:

17 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924, N 8, էջ 69:

18 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 150:

19 Նույն տեղում, էջ. 150-151:

20 **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

21 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 150; **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

22 Խոսքը Մ. Տեր-Մինասյանի (Ռուբենի) մասին է:

23 «Հայրենիք», Պոսթըն, յունիս, 1924, N 8, էջ 70:

ների հասարակական գիտակցության մեջ արմատավորվում էր «այն անվատառությունը ու սառնությունը, որ գոյություն ունի երկու հայկական հատուածների միջև», ինչը «անդրադառնում էր թէ երկու հատուածների փոխհարաբերութեանց, թէ պետական կեանքի և թէ կուսակցական կառուցվածքի ու կեանքի վրայ»²⁴: Արդյունքում՝ «տաճկահայ և ռուսահայ խորթ կը զգային իրարու, և շատ վայրերում, շատ անգամներ անպատեհություններ և ցավալի դէպքեր տեղի կունենային»²⁵:

Հատվածականությունը՝ նման դրսևորումներով, ըստ էության, խոչընդոտ էր հանդիսանում Հայաստանի առաջին Հանրապետության ներքաղաքական կայունության ապահովման, նրա ամրապնդան և հզորացման գործում: Նկատի ունենալով արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժը, հանրապետության իշխանությունները չէին կարող անտեսել արևմտահայերի նման վերաբերմունքը դեպի Հայաստանի Հանրապետությունը: Արևմտահայ փախստականները և հատկապես նրանցից կազմված զինված խմբերը ինչպես հանրապետության ներքին կյանքը ապակայունացնելու, այնպես էլ հակառակը՝ կայունությունը ապահովելու առումով իրենցից ներկայացնում էին լուրջ ներքաղաքական գործոն:

Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների համար հատվածականության նման դրսևորումներն անխուսափելիորեն վերածվել էին դժվարին լուծումներ պահանջող ներքաղաքական հիմնահարցի: Արևմտահայ փախստականների առջև ծառայած հարցերին այս կամ այն չափով լուծումներ տալիս հանրապետության իշխանությունները ձգտում էին նրանց ներգրավել երկրի ներքին կյանքի մեջ: Արևմտահայ փախստականների մեկուսացման հանգամանքը իշխանությունների համար զգալի վտանգ կարող էր ներկայացնել: Մի կողմից՝ լինելով միայն պետական սոցիալական օգնության սպառողներ, այսինքն՝ լոկ նպատատուներ, արևմտահայ փախստականները ծանր բեռ էին փոքրածավալ, քայքայված տնտեսություն ունեցող հանրապետության համար: Մյուս կողմից՝ ինքնամփոփ, մեկուսացած վիճակում գտնվող արևմտահայ փախստականներն, ընկնելով այս կամ այն հակապետական ուժերի ազդեցության տակ, իրական վտանգ կարող էին ներկայացնել երկրի կայունության համար:

Այսպիսով՝ արևմտահայ փախստականները և հատկապես նրանցից կազմված զինված խմբերը ինչպես հանրապետության ներքին կյանքը ապակայունացնելու, այնպես էլ հակառակը՝ կայունությունը ապահովելու առումով իրենցից ներկայացնում էին լուրջ ներքաղաքական գործոն: Հատկանշական է, որ հանրապետության որոշ ղեկավարներ՝ ի դեմս Ա. Մանուկյանի և Ռուբենի, արևմտահայ փախստականներից կազմված զինված խմբերը օգտագործում էին որոշակի ռազմաքաղաքական խնդիրներ լուծելու նպատակով: Միաժամանակ, ինչպես նշում է Կ. Սատունին, «Արարատեան հայութեան ազգային իշխանութեան ղեկավարներու մեծ մասը եւ տեղական խաղաղ հայ ազգաբնակչութիւնը ջանքեր

24 **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, էջ 150:
25 նույն տեղում:

կը թափէին հանդարտեցնելու տաճկահայ գաղթականութիւնը եւ կը նախընտրէին ունենալ գաղթականներու առջեւ սպասող հնազանդ ժողովուրդ մը, քան այն զինուած բազմութիւնը, որ անգուսպ էր և զէնքով իր գոյութիւնը կը պահպանէր»²⁶:

2. Հատվածականության հիմնախնդիրը Արևմտահայ 2-րդ համագումարում

1918 թ. վերջին և 1919 թ. առաջին կեսին Հայաստանի Հանրապետությունում համատարած սովի և բժավոր տիֆի համաճարակի հետևանքով հարյուրավոր փախստականներ կնքում էին իրենց մահկանացուն: Հանրապետության կառավարության ձեռնարկած միջոցառումները բավարար չէին ստեղծված ծանր կացությունից բազմահազար գաղթականներին դուրս բերելու համար: Միաժամանակ, Մուդրոսի գինադադարի համաձայն՝ թուրքական զորամասերը հեռանում էին Արևելյան Հայաստանի տարածքից: Անտանտի պետությունների հաղթանակով ավարտված Առաջին աշխարհամարտից հետո Փարիզում (1919 թ. հունվար) հրավիրվել էր հաշտության վեհաժողով: Ինչպես վկայում էին արևմուտքից ստացված հաղորդագրությունները՝ Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակությունն առաջ էր քաշել միացյալ ազատ Հայաստանի անկախության խնդիրը և կազմել Արևմտահայաստանի կառավարություն: Նման իրավիճակում արևմտահայ փախստականները և նրանց ղեկավարները մեծ հույսեր էին փայփայում, որ մոտ ապագայում հնարավոր կլինի հայրենի երկիր վերադառնալ:

Այդ պայմաններում 1918 թ. դեկտեմբերին Երևանում արևմտահայ ղեկավար մարմինների որոշ անդամների և մտավորականների մասնակցությամբ գումարվեցին մի քանի խորհրդակցական ժողովներ, որտեղ առաջ քաշվեց արևմտահայոց նոր համագումարի հրավիրման անհրաժեշտության հարցը: Դեկտեմբերի 19-ին ընտրվեց արևմտահայ 2-րդ համագումարը հրավիրող կազմակերպիչ կոմիտե²⁷: Արևմտահայ համագումարի կազմակերպիչ կոմիտեի 1919 թ. հունվարի 1-ի «Արևմտյան Հայաստանի փախստական հայության» ուղղված կոչում նշվում էին գումարվող համագումարի երկու հիմնական նպատակները՝

ա) արևմտահայ փախստականների քաղաքական իդեալների և նպատակների ձևակերպումը,

բ) Արևմտյան Հայաստան ներգաղթի խնդիրը²⁸:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները, կարևորելով արևմտահայերի համագումարը և գիտակցելով նրա նշանակությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում, Հայաստանի Խորհրդի 1918 թ. տարեվերջյան նիստում ընդունեցին արևմտահայ համագումարի

26 **Կ. Սասունի**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918), Պոսթըն, 1927, էջ 176:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ–199, ց.1, գ. 23, մաս 1, թ. 32:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ–199, ց.1, գ. 23, մաս 1, թ. 31: Նույնը տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), «Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2004, էջ 293:

հրավիրման և անցկացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման մասին օրենք²⁹: Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 3-ի նիստում քննարկվեց նաև Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի՝ համագումարի բացմանը կառավարության ներկայացուցիչ ուղարկելու մասին հրավերը³⁰ և որոշվեց «հանձնարարել Մինիստր-նախագահին կառավարության կողմից ներկա լինել Արևմտահայերի 2-րդ համագումարի բացմանը»³¹: Կառավարության նման հանձնարարականը խոսում էր այն մասին, թե ինչպիսի նշանակություն էր տալիս այդ համագումարին հանրապետության ղեկավարությունը:

Արևմտահայ 2-րդ համագումարը գործել է Երևանում 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը³²: Հայաստանի Խորհրդի դահլիճում փետրվարի 6-ին համագումարի բացման պաշտոնական արարողությունից, համագումարի համանախագահներից Գր. Բուլղարացու (Կյոզեյան) բացման խոսքից և Գևորգ Եպիսկոպոս Չորեքյանի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության կոնդակը ընթերցելուց հետո, ելույթով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունին՝ հայտարարելով «իր կառավարության ցանկությունը վերացած տեսնել այս համագումարով հայրենան հատուածական բաժանումը»³³: Հայաստանի խորհրդի ներկայացուցիչ Ս. Վրացյանի խոսքը նույնպես հիմնականում վերաբերում էր հատվածականության վերացման խնդրին³⁴:

Արևմտահայ 2-րդ համագումարի առանցքը կազմող արևմտահայ գաղթականության քաղաքական դիրքորոշման հարցը մի քանի օրվա լուրջ, վիճաբանություններով լի քննարկման առարկա դարձավ: Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտահայերի դիրքորոշման հարցում համագումարում երկու իրարամերժ վերաբերմունք էր ձևավորվել: «Մի մասը գտել է, որ պէտք է մի պատմական ակտ կատարել, հայտարարելով Միացեալ Հայաստանի անկախութիւնը և նոյնիսկ պատգամավորներ ուղարկել պառլամենտ,- սակած է քաղաքական հանձնաժողովի նախագահ Խ. Բոնապարտյանի զեկուցման մեջ,- միւս մասի կարծիքն է, որ ինչպէս տաճկահայերը մինչ այժմ չեն ցանկացել այս կամ այն պետութեան քաղաքացիները լինելու, այժմս էլ չեն կարող լինել և մտնելով պառլամենտ, պէտք է դառնան Արարատեան հանրապետութեան քաղաքացիներ, որով և կմեռնի տաճկահայ դատը»³⁵: Փետրվարի 11-ին Խ. Բոնապարտյանը հանդես եկավ քաղաքական հանձնաժողովի երկրորդ, ամփոփիչ զեկուցումով՝ ներկայացնելով երկու նոր բանաձևեր: Ըստ էության արտահայտելով միևնույն մոտեցումը արևմտահայերին հուզող քաղաքական խնդիրների նկատմամբ՝ քննարկման դրված նախագծերը տարբերվում էին Հայաստանի Հանրապետության հանդեպ ունեցած

29 Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները (1918-1919 թթ.), Եր., 1919, էջ 37:

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 30:

31 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 19:

32 Տե՛ս Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, տպ. «Աշխատավոր», 1919, էջ 4-5:

33 Նույն տեղում, էջ 7, տե՛ս նաև «Աշխատանք», Եր., 11 փետրվարի 1919 թ.: «Ժողովուրդ», Եր., 11 փետրվարի 1919 թ.:

34 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև «Աշխատանք», Եր., 11 փետրվարի 1919 թ.:

35 Նույն տեղում:

կոնկրետ-քաղաքական դիրքորոշումներով³⁶: Ուստի քաղաքական հանձնաժողովն այդպես էլ չկարողացավ հաղթահարել առկա տարաձայնությունը՝ բաժանված մնալով երկու մասի³⁷:

Քաղաքական բանաձևի շուրջ ծավալվեց բուռն վիճաբանություն: Ռ. Դրամբյանն իր ելույթում հիմնավորեց համագումարի մեծամասնության տեսակետը. «Այս համագումարի առանցքը քաղաքական հարցն է: Միացեալ Հայաստանի մասին եկանք այն եզրակացության, որ եթէ Կովկասահայությունը մեզանից անջատվի, Հայաստանը կը կորցնի իր նշանակությունը, որովհետև հայ ժողովուրդը չունի ստեղծագործելու համար բավարար ուժեր, եթէ միւսները չօգնեն նրան: Եթէ մենք ունենանք երկու անջատ հայրենիքներ, ջլատուած կը լինենք, ունենալ մեկ հայրենիք և մեկ կառավարություն, դա է եղել բոլոր հայերի իդեալը: Հանձնաժողովի մեծամասնությունը եկավ այն եզրակացութեան, որ այդ ակտը պէտք է կատարել ամեն գնով, այսինքն միացման հարցը որոշել գործնականապէս, եթէ մենք հայտարարում ենք միացեալ Հայաստանի անկախությունը, ապա եւ աստիճանաբար պիտի գործի անցնել»³⁸:

Ռամկավար փոքրամասնության տեսակետն արտահայտած Ե. Հարությունյանը գտնում էր, որ համագումարն իր ձայնը պետք է միացնի Պողոս Նուբարի կառավարության «պատմական ակտին», սակայն «միաժամանակ չպիտի անել քայլեր, որոնց վճիռը կախված է ամբողջ արեւմտահայութիւնից», «չպէտք է անմիջական մասնակցութիւն ցոյց տալ պարլամենտի մէջ, որպէսզի թուրքահայ հարցը իր միջազգայնութիւնից դուրս չգա: ... Եթէ անմիջապէս արեւմտահայերը մտնեն պարլամենտի մէջ, կը ստեղծի հակասական դրութիւն, որովհետև այդպիսով նրանք ոչ միայն պիտի ձանաչեն Պողոս Նուբարի կառավարութիւնը, այլև՝ Քաջազունունը: Միացեալ Հայաստանի գաղափարը պիտի օգտագործի երկու կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, որոնք կը մշակեն մի սահմանադրութիւն մեր երկրի համար եւ այն ժամանակ, իհարկէ, արեւմտահայերն էլ կլինեն այս անգամ Միացեալ Հայաստանի պարլամենտում: Իսկ ներկա պայմաններում ներկայացուցիչներ ուղարկելը պարլամենտ արեւմտահայերի կողմից, աննպատակահարմար կլինի մեր դատի շահերի տեսակետից»³⁹: Ակներև է այս տեսակետի հատվածական բնույթը՝ քանզի այստեղ իրադարձությունների հետագա զարգացումները դիտարկվում են միայն արևմտահայ հատվածի շահերի տեսակետից:

Առաջին տեսակետը պաշտպանում էին Ս. Վրացյանը, Գ. Բուլղարացին, Հ. Կարինյանը, Զ. Կորկոտյանը, Ա. Կիտուրը և Գ. Ոսկերչյանը, երկրորդը՝ Ս. Թովալյանը, Մ. Մալոյանը և Հ. Վարդապետյանը: Փետրվարի 11-ի նիստի վերջում քննության դրվեց քաղաքական բանաձևի առաջին կետը և «համագումարը որոտընդոստ ծափերի տակ հայտարարեց Միացյալ Հայաստանի անկախությունը»⁴⁰: Ռամկավար հինգ պատգամավորները

36 Տե՛ս «Աշխատանք», Եր., 25 փետրվարի 1919 թ.:

37 Տե՛ս «Ժողովուրդ», Եր., 26 փետրվարի 1919 թ.:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում:

ձեռնպահ մնացին՝ նման հայտարարությունը համարելով «տեսակ մը անվտանգության հանդէպ Պօղոս – Նուպար փաշայի դահլիճին»⁴¹:

Առաջին և երկրորդ ընթերցմամբ կետ առ կետ քննելուց հետո Արևմտահայ 2-րդ համագումարը փետրվարի 12-ին ընդունեց քաղաքական բանաձև⁴²: Արևմտահայ 2-րդ համագումարը, քննելով հայ ժողովրդի կացությունը, բանաձևի առաջին կետով սրտագին ողջունում և իր հերթին հայտարարում էր Ազատ և Միացեալ Հայաստանի անկախությունը: Բանաձևի երկրորդ կետով համագումարն իր լիակատար վտանգությունն էր հայտնում «Ազատ և Միացեալ Հայաստանի Պօղոս – Նուպար փաշայի Անդրանիկ Դահլիճին»: Բանաձևի երրորդ կետով համագումարը հայտարարում էր «իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համագգային հատուածներու և երկրամասերու միաւորութեամբ»⁴³:

Բանաձևի չորրորդ կետով համագումարը պարտադրում էր իր կողմից ընտրված Գործադիր Մարմին՝ Պողոս Նուբարի «նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքներն, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար»⁴⁴: Միաժամանակ հաջորդ՝ հինգերորդ կետով համագումարը պարտադրում էր նույն Գործադիր Մարմինն «գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համագգային միութիւնը իրականացնելու համար»⁴⁵:

Բանաձևի հաջորդ երեք կետերով համագումարը պահանջում էր «Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը, դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութեամբ եւ աջակցութեամբ», «Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ եւ պատասխանատու ճիւղերուն Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Նազըմի, Պէհաէտտին-Շաքիրի եւ ընկեր նահանգապետներու, կառավարիչներու եւ այն բոլոր ղեկավարներու զինուորադաշտային դատարանով պատժուիլը», «Հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիւ օսմանեան կառավարութեան»⁴⁶:

Քաղաքական բանաձևի 5-րդ կետի ընդունմանը դեմ քվեարկելով և մնալով փոքրամասնության մեջ՝ ռամկավար հինգ պատգամավորները լքել էին համագումարը⁴⁷: «Մենք կանգնած էինք առողջ եւ հիմնական տեսակետի վրայ – որ այս համագումարը կրնայ հազարումի ցանկություններ հայտնել, բայց վճռական եւ գործնական քայլերու հրահանգը

41 «Վան-Տոսպ», Եր., 31 մարտի 1919 թ.:
42 Տե՛ս Համառոտ Տեղեկագիր ..., էջ 13-14:
43 Նույն տեղում, էջ 13:
44 Նույն տեղում:
45 Նույն տեղում, էջ 14:
46 Նույն տեղում:
47 Տե՛ս նույն տեղում:

սպասելու ենք վերէն – Փարիզի մեր պատվիրակութենէն և համախորհուրդէն, – «Ինչու՞ հեռացանք Արեւմտահայ Բ համագումարէն» հողվածում պատճառաբանում էին ռամկավարները: Ուստի՝ «Մնալով փոքրամասնութեան մեջ, միաժամանակ չդավաճանելով մեր հիմնական մտածողութեան, մենք ըրինք մեր յայտարարութիւնը և դուրս եկանք համագումարէն, ձգելով ամբողջ պատասխանատուութիւնը մնացողներու վրա»⁴⁸:

Արեւմտահայ ռամկավարների այդ «հիմնական մտածողութեան» էությունն այն էր, որ «ներկայիս Փարիզի մեջ թիրքահայերը ունէն խորհրդաժողով, 45-50 պատուիրակներու մասնակցութեամբ (հավաքուած զանազան գաղութներէ, բուն էրկրէն և վերջապէս Կովկասէն), իսկ այդ խորհրդաժողովը համաշխարհային վեհաժողովի կողքին ունի ավելի լայն հնարավորութիւն և ավելի լայն իրավունքներ ընթացք տալու թիրքահայ խնդրին, քան փախստական արեւմտահայութեան մէկ մասի այս սահմանափակ համագումարը» և որ «...միանալով այս հանրապետության եւ մեր անմիջական մասնակցութիւնը բերելով այս պարլամենտին և կառավարութեանը, մենք զմեզ կղզիացուած կըլլանք ամբողջ թիրքահայութենէն, իսկ այդ դավաճանութիւն է ամբողջ թիրքահայ ժողովուրդի կամքի եւ ամբողջութեանը նկատմամբ»⁴⁹:

Սա նույնպէս իրենից ներկայացնում էր հատվածականության դրսևվորման մի ակնհայտ օրինակ: Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունը իր խորհրդարանով և կառավարությամբ արժանանում էր արհամաիրական «այս» պիտակին, մյուս կողմից՝ արևմտահայերի մասնակցությունը նշված մարմինների աշխատանքներին ներկայացվում էր որպէս դավաճանություն ամբողջ արևմտահայության հանդէպ: Ռամկավարների նման դիրքորոշման հիմքում ընկած էր այն տեսակետը, որ Հայկական հարցն իր լուծումը պետք է ստանա Փարիզի հաշտության կոնֆերանսում, և Միացյալ Հայաստանի անկախությունը պետք է իրականացվի միայն Փարիզում՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ ձևավորված արևմտահայ նախարարական դահլիճի միջոցով:

Հասկանալի է, որ Արևմտահայ 2-րդ համագումարի որդեգրած քաղաքական դիրքորոշումը միանշանակ չէր կարող ընդունվել արևմտահայ հասարակայնության լայն շրջանակների կողմից: Պատահական չէր, որ արևմտահայ դաշնակցականների փետրվարի 14-ի խորհրդակցական ժողովը, որին մասնակցում էին Արևմտահայ 2-րդ համագումարի 47 դաշնակցական պատգամավորներ, Արևմտյան Հայաստանի և Հայաստանի կենտրոնական կոմիտեների, ինչպէս նաև Արևելյան Բյուրոյի ներկայացուցիչներ⁵⁰, «հանձնարարեց, որ կուսակցական բոլոր մարմիններն ու ընկերները աշխատին իրականացնել այդ որոշումները, ժողովրդականացնեն ընկերական եւ հասարակական լայն շրջաններու մէջ»⁵¹:

Իսկ Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական բանաձևի 5-րդ կետով ձևակերպված դիրքորոշումը կտրականապէս մերժող ռամկավար

48 «Վան-Տոսպ», Եր., 31 մարտի, 1919 թ.:

49 Նույն տեղում:

50 Տե՛ս «Աշխատանք», Եր., 18 փետրվարի 1919 թ.:

51 Նույն տեղում:

պատգամավորները հետևողական գտնվեցին հատվածական երանգ ունեցող իրենց «հակաարարատյան» տրամադրություններում. «Պետք էր կանգնել կամ Հայաստանի կամ Փարիզի տեսակետի վրա. ռամկավարները ընտրեցին վերջինը ...»⁵²,– գրում է Ս. Վրացյանը: Կան Հայաստանի կամ Փարիզի տեսակետի վրա կանգնելու անհրաժեշտության մասին մոտեցումը Ս. Վրացյանն, անկասկած, փորձել էր անցկացնել նաև Արևմտահայ 2–րդ համագումարում: Բայց Ս. Վրացյանի ու իր համախոհների և արևմտահայ ռամկավարների կողմից համագումարի պատգամավորների վրա երկուստեք իրականացված ճնշումներին հակառակ, Արևմտահայ 2–րդ համագումարը, որտեղ գերակշռող մեծամասնություն էին կազմում արևմտահայ դաշնակցականները, միանշանակ չկողմնորոշվեց ոչ դեպի ռամկավարները, իմա՝ Փարիզը, ոչ էլ դեպի Հայաստանի Հանրապետության իշխանությունները:

Արևմտահայ 2–րդ համագումարում Ս. Վրացյանը և նրա համախոհները հատվածականության հաղթահարման, Միացյալ Հայաստանի անկախության իրականացման համար որպես հենակետ էին դիտարկում արդեն իսկ գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունն իր տարածքով, բանակով և կազմակերպված իշխանությամբ: «Ամբողջ իր ծավալով հայկական հարցի լուծման համար ելակետ մենք վերցրեցինք Հանրապետությունը,– ներկայացնում էր հանրապետության իշխանությունների տեսակետը Հ. Քաջազունին, – Հանրապետության ամրապնդումը մենք հայտարարեցինք որպես մեր քաղաքական ծրագիր՝ բոլոր մնացած հայկական հողերը նրան հետագայում միացնելու համար»⁵³: Եթե վերանանք վերը նշված երկու տեսակետներում տեղ գտած միջկուսակցական հակասություններից, ապա վերջին մոտեցումը, իհարկե, ավելի իրատեսական էր ու զերծ էր հատվածականությունից:

Այսպիսով, նոր պայմաններում անդրադառնալով արևմտահայ փախստականների առջև ծառայած խնդիրներին, Արևմտահայ 2–րդ համագումարն ի լուր աշխարհի հոչակեց հայ ժողովրդի արևմտյան հատվածի՝ հայրենի երկիր վերադառնալու կամքն ու վճռականությունը: Միաժամանակ համագումարը դրսևորեց նաև ազգային հատվածները և երկրամասերը պետական մեկ միության մեջ համալսմանը իր վճռական կամքը: Համազգային միությունն իրականացնելու համար նորընտիր Գործադիր Մարմինն պարտադրելով «իր մասնակցութիւնը բերելու» Հայաստանի Հանրապետության պետական և օրենսդրական մարմիններին, համագումարն առաջին էական քայլն էր կատարում Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտահայ փախստականների վերաբերմունքի փոփոխման ուղղությամբ: Միաժամանակ, Արևմտահայ 2–րդ համագումարի ամբիոնից բարձրաձայն հնչեցվեց արևմտահայ փախստականների հարցում Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը՝ հատվածականության հաղթահարումը: Այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ էր ամրապնդել և հզորացնել Հայաստանի Հանրապե-

52 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 273:
53 ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 431, թ. 19:

տությունը, որի շուրջ պետք է միավորվեին մնացած բոլոր հայկական հողերը: Այս էր Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների քաղաքական ծրագիրը:

3. Հանրապետության իշխանությունների ձեռնարկած քայլերը

Հատվածականության հաղթահարման խնդրի լուծումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքական նպատակն էր: Սակայն այդ քաղաքականությունն իր ամփոփ ձևակերպումը չէր ստացել ինչպես մինչև Արևմտահայ 2-րդ համագումարն ընկած ժամանակահատվածում, այնպես էլ դրան հաջորդած ամիսներին:

Բայց մինչև Արևմտահայ 2-րդ համագումարը, գաղթականության հանդեպ իրականացված ընդհանուր քաղաքականության շրջանակներում՝ արևմտահայ փախստականների հետ կապված սոցիալ-տնտեսական, խնամատարական աշխատանքներից բացի, հատվածականության հաղթահարման ուղղությամբ հանրապետության իշխանությունների կողմից իրականացվել էին որոշ քայլեր: Այս ուղղությամբ առաջին քայլերից էր կառավարության կողմից արևմտահայ առանձին հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման մերժումը: Դրանով բացառվում էր իրարից տարանջատ արևմտահայ և արևելահայ հանրակրթական համակարգերի գոյությունը: Նույնատիպ քայլ էր փախստականների համար բժշկասանիտարական առանձին համակարգից հրաժարվելը:

Նշենք, որ արևմտահայ փախստականների առողջապահական, կրթական առանձնացված համակարգերի՝ հիմնարկների և հաստատությունների պահպանման քաղաքականությունն ի հայտ էր եկել գաղթականական օրենքների քննարկումների ժամանակ, որոնք ընդունելի էին նախորդ ժամանակաշրջանի համար, մինչդեռ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում նման մոտեցումը կարող էր փախստականներին, հատկապես արևմտահայերին մեկուսացնել սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքից: Ֆինանսական միջոցների սղությամբ, զուտ մասնագիտական հարցերով, ինչպես նաև հատվածականության հաղթահարման պատճառաբանությամբ էր պայմանավորված այդ ձեռնարկումներից իշխանությունների հրաժարվելը:

Այսպես, Հայաստանի Խորհրդում հնչեցված և պաշտպանված այն մոտեցումը, որ հիվանդանոցները միևնույնը պետք է լինեն և՛ տեղաբնակի, և՛ գաղթականի համար, ստիպել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը ձեռնարկել համապատասխան քայլեր: Նախարարների խորհրդի 1918 թվականի նոյեմբերի 18-ի նիստում լսվել է ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի զեկուցումը, որով նա «առաջարկեց բժշկա-առողջապահական մասի նոր նախահաշիվ, որը պիտի փոխարինի սրանից առաջ քննության առնված և Հայաստանի Խորհրդից վերադարձված փախստականական հիմնարկությունների բժշկական մասի և

քաղաքացիական մասի բժշկա-առողջապահական շտատոների երկու նախահաշիվներին»⁵⁴:

Ուստի Նախարարների խորհուրդը որոշել է. «Առաջվա քննության առնված և Հայաստանի Խորհրդից վերադարձված փախստականական հիմնարկությունների բժշկական մասի և քաղաքացիական մասի բժշկա-առողջապահական շտատոների երկու նախահաշիվների փոխարեն ընդունել նոր առաջարկված բժշկա-առողջապահական նախահաշիվը (1-ն հոկտեմբեր 1918 - 1-ն հունվար 1919 թ.) 1 656 240 ռ. և առաջարկել Հայաստանի Խորհրդի քննությանը»⁵⁵: Իսկ մինչ այդ, 1918 թվականի հոկտեմբերի 23-ին Հայաստանի Խորհրդի կողմից ընդունվել է «Առաջարկություն բժշկասանիտարական հանձնաժողովին» վերնագիրը կրող օրենքը⁵⁶, որով թույլատրվում էր կառավարությանը «մինչև գաղթականների բժշկասանիտարական կարիքները հոգալու համար անհրաժեշտ ծախսերի նոր և մանրամասն նախահաշիվ ներկայացնելը՝ կատարել այդ ծախսերը ըստ Հայաստանի Խորհրդի չհաստատված 4-րդ կետի գաղթականական օգնության ծախսերի նախահաշիվի»⁵⁷: Այսպիսով, կառավարությունը նախապես համաձայնել էր քաղաքացիների և փախստականների համար կազմակերպել միասնական առողջապահական համակարգ:

Նույն մոտեցումը ցուցաբերվել է նաև կրթության բնագավառում: Նախարարների Խորհրդի 1918 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում քննարկման դրվեց «հանրային կրթության մինիստրի գրությունը, որով նա ներկայացնում է արևմտահայ երեխաների համար առանձին դպրոցներ բանալու մասին արևմտահայ դպրոցների հոգաբարձական խորհրդի առաջարկը և այդ դպրոցների պահպանության նախահաշիվը»⁵⁸: Նախարարների խորհուրդը կայացրել է հետևյալ որոշումը. «ա) Գաղթականական առանձին դպրոցներ չբանալ, ի նկատի ունենալով գաղթականության՝ շարժման մեջ գտնվելու դրությունը, բ) գաղթականների երեխաներին ընդունել գոյություն ունեցող դպրոցները, գ) հանրային կրթության մինիստրին հանձնարարել՝ եթե կարիք լինի նախ ընդարձակել եղած համապատասխան դպրոցները և երկրորդ՝ այդ առթիվ լինելիք ծախսերի համար իր ժամանակին հարկավոր առաջարկ և նախահաշիվ մտցնել Մինիստրների Խորհուրդը»⁵⁹:

Սակայն այս առաջին քայլերը ծրագրավորված քաղաքականության արդյունք չէին: Դրանք պարզապես օրակարգում դրված հարցերի լուծումներ էին՝ ուղղված պետության կայացմանն ու ամրապնդմանը, արևմտահայ փախստականների վիճակի բարելավմանը, այդ թվում՝ հատվածականության հիմնախնդրի լուծմանը: Հանրապետության իշխանությունները ոչ թե ծրագրավորված գործունեություն էին ծավալում նշված ուղղությամբ, այլ միայն այս կամ այն միջոցներով արձագանքում էին իրենց առջև ծառայած հարցերին: Նույն գործելակերպը շարունակվեց

54 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 11, թ. 10:

55 Նույն տեղում:

56 Տե՛ս «Կառավարության լրաբեր», Եր., 8 նոյեմբերի 1918 թ.:

57 Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Եր., 1998, էջ 16:

58 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 11, թ. 40:

59 Նույն տեղում:

նաև Արևմտահայ 2-րդ համագումարից հետո:

Արևմտահայ 2-րդ համագումարից հետո երկրում առկա հատվածականությունը հաղթահարելու նպատակով իշխանությունները ձեռնարկել են հետևյալ կարևոր քայլերը.

– Հայաստանի խորհրդարանի ընտրություններում արևմտահայ փախստականներին ընտրության իրավունքի վերապահումը,

– պետության կողմից ներքաղաքական կյանքի ազգայնացման նպատակի իրականացումը,

– Միացյալ Ազատ Հայաստանի հռչակումը և Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու համար արևմտահայ 12 պատգամավորների հրավիրումը:

Արևմտահայ 2-րդ համագումարից հետո հատվածականության հաղթահարմանն ուղղված իշխանությունների առաջին քայլերից էին Հայաստանի խորհրդարանի մոտալուտ ընտրություններում արևմտահայ փախստականներին ընտրության իրավունք վերապահելը: Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 12-ի նիստում լավեց ներքին գործերի նախարարի «Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին» զեկուցումը: Ընդունված որոշմամբ առանձնահատուկ սահմանվում էր, որ Հայաստանի խորհրդարանի ընտրություններում արևմտահայերին տրվում է ընտրական իրավունք⁶⁰: Սա, անշուշտ, ևս մի քայլ էր հանրապետության ներքաղաքական կյանքում արևմտահայ փախստականներին ներգրավելու, հանրապետության ամրապնդման գործում նրանց ներուժը օգտագործելու ուղղությամբ, որը միտված էր հատվածականության հաղթահարմանը:

Այդ նպատակի իրականացման գործում մեծ նշանակություն ունեցավ արևմտահայ մտավորականության կողմից հանրապետության ներքաղաքական կյանքի ազգայնացման խնդրի առաջադրումը: Նորաստեղծ հանրապետության պետական կառավարման մարմիններում և տարբեր հիմնարկներում գրագրությունը հիմնականում իրականացվում էր ռուսերենով: Պաշտոնյաների մեծ մասը չէր տիրապետում հայերենին: Այդ իրավիճակը անընդունելի էր ռուսերենին չտիրապետող արևմտահայ փախստականների, հատկապես՝ արևմտահայ մտավորականների համար: Առաջինները մեծ դժվարությունների էին հանդիպում գերատեսչությունների և հիմնարկների պաշտոնյաների հետ տարաբնույթ շփումների ժամանակ, իսկ վերջիններս համապատասխան աշխատանք ստանալու հնարավորություն չէին ունենում: Այդ պատճառով արևմտահայ փախստականներն իրենց խորթ էին զգում «Արարատեան Հանրապետութիւնում», իրենց մեկուսացած էին պահում ներքին հասարակական-քաղաքական կյանքից: 1919 թ. ապրիլի 17-ին հիմնականում արևմտահայ մամուլի ներկայացուցիչները կազմել էին այսպես կոչված «ազգայնացման կոմիտե», որը կոչով դիմեց Հայաստանի քաղաքացիներին⁶¹:

Հանրապետության իշխանությունները բավականին արագ արձա-

60 Տես ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 43:

61 Տես Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 362:

զանքեցին այդ կոչին⁶²: Ազգայնացման խնդրի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Քաջազունին դիմեց նախարարների խորհրդին: Նշելով, որ «ազգայնացման հարցը վաղուց է զբաղեցնում մեր պետական գործիչների միտքը», վարչապետն այնուհետև գրում էր. «Վերջին ժամանակ մամուլի ներկայացուցիչները կազմել են ազգայնացման հատուկ կոմիտե, որը ունեցել է կառավարության անդամների հետ մի խորհրդակցություն, որտեղ պարզվել է հարցի անհետաձգելիությունը: Ի նկատի ունենալով մի կողմից, որ այժմ հայտնի չէ, թե որ սահմաններում պաշտոնյաները պարտավոր են գործածել հայերեն լեզուն, մյուս կողմից, որ անհնար է անմիջապես անցնել հայերենին, առանց սահմանափակումների, առաջարկում են ընտրել մի հատուկ կոմիտե մինիստրությունների ներկայացուցիչներից ազգայնացման օրենք և միջոցներ մշակելու համար»⁶³:

1919 թ. մայիսի 7-ին կառավարությունը լսել է «Բոլոր մինիստրությունների ներկայացուցիչներից Գևորգ Խատիսյանի⁶⁴ նախագահությամբ ազգայնացման օրենքներ մշակելու համար մի հատուկ կոմիտե ստեղծելու մասին» վարչապետ Հ. Քաջազունու զեկուցումը և որոշել կազմելու նշված հատուկ կոմիտեն⁶⁵: Ազգայնացման կոմիտեն արդեն հունիսի 7-ին կառավարության քննարկման է ներկայացրել «Լեզվի մասին» օրենքի նախագիծը: Սակայն կառավարության նիստում որոշվել է հետաձգել նախագծի քննարկումը՝ մի-մի օրինակ ուղարկելով նախարարություններ՝ նախապես ծանոթանալու համար⁶⁶:

Հատվածականության հաղթահարման ուղղությամբ կարևորագույն քաղաքական քայլերից էր Միացյալ Հայաստանի հռչակումը: 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Խորհրդի շենքում հանդիսավոր պայմաններում վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը հայերենով, ապա ֆրանսերենով հրապարակեց Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը⁶⁷. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահանուռ կամքի և ցանկության հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»⁶⁸, - ասվում էր ակտում: Ակտով նաև հայտարարվում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը «հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը»⁶⁹:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտի հրապարակումից հետո արևմտահայ 12 պատգամավորներ՝ Վ. Բրնոյանը, Ա. Սատունին, Վ. Հովսիկյանը, Ա. Կիտուրը, Հ. Մանուկյանը, Ա. Մաքսապետյանը,

62 Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», Եր., 27 ապրիլի 1919թ.:

63 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 246:

64 ՀՀ կառավարության գործերի կառավարիչ:

65 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 43, թ. 88: Նիստում նախագահում էր վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը:

66 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 43, թ. 124:

67 Տե՛ս Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 80-81:

68 ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 4, թ. 1: Նույնը տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 56, թ. 16:

69 Նույն տեղում:

Վ. Առաքելյանը, Զ. Կորկոտյանը, Հ. Կոստյանը, Վան-Փուշը, Հ. Հայրապետյանը, Ա. Միրզոյանը⁷⁰, հրավիրվել են բեմ ու տեղ գրավել Հայաստանի Խորհրդի անդամների շարքում: Հանդիսավոր արարողության ժամանակ հնչել են բազմաթիվ ճառեր և ողջույնի խոսքեր: Այս շարքում երկրորդը՝ Հայաստանի Խորհրդի փոխնախագահ Ա. Սահակյանից հետո և Ամենայն Հայոց կաթողիկոսից առաջ, արևմտահայ Գործադիր Մարմնի անունից ողջույնի խոսքով հանդես է եկել Վ. Քրմոյանը: Վերջինիս կողմից ընթերցվել է նաև «Գործադիր Մարմնի գրաւոր յայտարարութիւնը այն մասին, որ այս կառավարութիւնը կընդունուի իբրև կորիզ երկու հատուածներու քաղաքական պետականութեան, որուն շուրջ պետք է խմբուի Միացեալ Հայաստանի պետական կեանքը»⁷¹:

Հայաստանի Խորհրդի հունիսի 4-ի նիստի իր ելույթում Ա. Խատիսյանը, հիմնավորելով կառավարության իրականացրած քայլերը, իրավացիորեն նշում էր, որ «գործնական տեսակէտէն անհրաժեշտ էր ստեղծել Միացեալ Հայաստանի կառավարութիւն»⁷²: Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության սահմանները հասել էին նախկին Թուրքիայի սահմաններին, մյուս կողմից՝ արևմտահայ փախստականների՝ սահմանների վրա կուտակվելու պատճառով «ոչ մէկ հնար չկայ ներգաղթը կանգնեցնելու»: Դաշնակիցների կողմից արդեն վաղուց թույլատրված էր ներգաղթը դեպի Բայազետ և Ալաշկերտ⁷³: Կարևորելով այդ հանգամանքը՝ Ա. Խատիսյանը նշում էր. «Ձեր կարելի երկիր մտնել իբրև հպատակ կամ օտար. պետք է մտնէիք որպէս տէրեր, եւ անհրաժեշտ էր օրինական իրաւասութիւն այդ երկրի տէրը համարուելու համար»⁷⁴: Ա. Խատիսյանը, որպես դրդապատճառ, մատնանշում էր նաև ինչպես արտերկրում, այնպես էլ արևմտահայ փախստականների մոտ տարածված այն կասկածից ձերբազատվելու անհրաժեշտությունը, «թէ Հայաստանի Հանրապետութիւնը չի ձգտիր բացարձակ անկախութեան և թէ ան կը վարանի Ռուսիայէն բաժնուելու համար»⁷⁵: Միաժամանակ ներգաղթը իրագործելու համար անհրաժեշտ էր կազմավորել արևմտահայ կանոնավոր զորամասեր, ինչը հնարավոր չէր առանց վերացնելու արևմտահայերի այն կասկածանքը, «որ արեւելահայերը կը ձգտին չբաժանուիլ Ռուսաստանէն եւ անկախ ըլլալ»⁷⁶:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը հատվածականության վերացմանն ուղղված՝ հանրապետության իշխանությունների կողմից իրականացված քայլերից ամենակարևորը և նշանակալին էր: Միացյալ Ազատ Հայաստանի հռչակումով Հայաստանի Հանրապետությունում հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների փաստացի իրավահավասարության հիմքն էր դրվում:

70 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 2, թ. 277: Նույնը տե՛ս Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 81:

71 Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 83:

72 Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 94:

73 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 32, թ.թ. 86-87; նույն տեղում, թ.143; նույն տեղում, գ. 53, թ. 27:

74 Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, էջ 95:

75 Նույն տեղում, էջ 94:

76 Նույն տեղում, էջ 95:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գոյության մեկ տարվա ընթացքում կառավարության ընդունած որոշումները հատվածականության հիմնախնդրի լուծման գործում հանրապետության իշխանությունների իրականացրած քաղաքականության հիմնարար քայլերից էին: Կառավարական որոշումներով արևմտահայ փախստականները փաստորեն ճանաչվեցին Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ, ինչը նորից հաստատվեց հունիսին կառավարության արված հետևյալ հայտարարությամբ. «Համաձայն Միացյալ Հայաստանի անկախության 1919 թվի մայիսի 28-ի ակտի՝ Պարլամենտի և Հանրապետության Կառավարության հրապարակած բոլոր օրենքներն և որոշումները համահավասար չափով պարտադիր են միացյալ Հայաստանի բոլոր քաղաքացիների՝ նրանց թվում և Օսմանյան Կայսրության նախկին հպատակ հայերի համար»⁷⁷: Իրավական տեսանկյունից արևմտահայ փախստականները, հանդիսանալով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ներկայացուցիչներ, փաստորեն ստանում էին նույն իրավունքները և պարտականությունները, ինչպիսիք ունեին արևելահայերը:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կրկին կարելի է արձանագրել, որ հատվածականության հաղթահարումը Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների ազգային-քաղաքական նպատակն էր, որը հայ իրականության մեջ որպես պետական կարևոր խնդիր առաջին անգամ հնչեցվել է Արևմտահայ 2-րդ համագումարում: Հատվածականությունը հաղթահարելուն ուղղված քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության իշխանությունները շարունակեցին նաև Միացյալ Հայաստանի ակտի ընդունմանը հաջորդած ժամանակաշրջանում: Դրա համար կարևորագույն ելակետ էր հայկական պետականության մարմնացում հանդիսացող Հայաստանի Հանրապետության ամրապնդման ու հզորացման առաջադրանքը: Վերջինս դժվար էր իրականացնել առանց արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժի օգտագործման: Սակայն 1919-ի մայիսի 28-ին հաջորդած ժամանակաշրջանում ևս հատվածականության վերացման քաղաքականությունն այդպես էլ չստացավ իր ամփոփ ձևակերպումը՝ համապարփակ ծրագրի տեսքով:

77 ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, մաս 2, թ. 473:

Summary

THE PROBLEM OF FRAGMENTATION IN THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Part one. The raising of political purpose about fragmentation's overcoming and first steps of its implementation

Karen P. Hayrapetyan

Since the first days of formation of the Republic of Armenia, the authorities faced a number of problems arising from the fragmentation of the Armenian people that had to be solved. The task to solve the problem of fragmentation was first brought up for discussion by the authorities of the Republic of Armenia at the Second Congress of Western Armenians in February 1919. The main political tool for solving the national question was the strengthening of the Republic of Armenia. The rest of the Armenian territories must have been united around the Republic of Armenia. A number of important historical decisions have been taken by the authorities of the Republic of Armenia in order to solve the problem of fragmentation. The most important of these decisions was the declaration of United Armenia.